ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ

ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶՊԵՏ

ՈՐՈՇՈՒՄ

«08» հոկտեմբեր 2026թ. N ՄՈ/404 -Ա

ք. Արմավիր

«ԱԼԱՇԿԵՐՏԻ Հ.ՔՈՉԱՐԻ ԱՆՎԱՆ ՄԻՋՆԱԿԱՐԳ ԴՊՐՈՑ» ՊԵՏԱԿԱՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ՏՆՕՐԵՆԻ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՏԱՐՈՂ ՆԱԻՐԱ ԲԱՂԴԱՍԱՐՅԱՆԻՆ ԱՐՁԱԿՈՒՐԴ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության աշխատանքային օրենսգրքի 160-րդ, 163-րդ և 164-րդ հոդվածներով, «Տարածքային կառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 5-րդ հոդվածի 3-րդ մասով, «Կառավարչական իրավահարաբերությունների կարգավորման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 10-րդ հոդվածի 13-րդ մասով, հիմք ընունելով Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզպետի 2025 թվականի նոյեմբերի 10-ի ՆՄՈ/959-Ա որոշումը, Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի օգոստոսի 11-ի N 1599-Ն որոշմամբ սահմանված հավելվածի 1-ին կետը և Նաիրա Բաղդասարյանի 2026 թվականի հուլիսի 6-ի դիմումը.

ո ր ո շ ու մ ե մ՝

1. «Ալաշկերտի Հ.Քոչարի անվան միջնակարգ դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպության տնօրենի պարտականությունները կատարող Նաիրա Բաղդասարյանին տրամադրել 2024-2025 թվականների աշխատանքային տարվա տեղափոխած արձակուրդը՝ 25 աշխատանքային օր և 2025-2026 թվականների աշխատանքային տարվա արձակուրդի մասը՝ 4 աշխատանքային օր՝ 2026 թվականի հուլիսի 14-ից օգոստոսի 21-ը ներառյալ՝ 29 աշխատանքային օր տևողությամբ:
2. Նաիրա Բաղդասարյանի արձակուրդում գտնվելու ժամանակահատվածում «Ալաշկերտի Հ.Քոչարի անվան միջնակարգ դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպության տնօրենի պարտականությունների կատարումը վերապահել «Ալաշկերտի Հ.Քոչարի անվան միջնակարգ դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպության կրթական աջակցությունների և դաստիարակչական աշխատանքների համակարգող Մարի Կարապետյանին:
3. «Ալաշկերտի Հ.Քոչարի անվան միջնակարգ դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպության կրթական աջակցությունների և դաստիարակչական աշխատանքների համակարգող Մարի Կարապետյանի աշխատավարձի վճարումը 2026 թվականի հուլիսի 14-ից

օգոստոսի 21-ը ներառյալ իրականացնել տնօրենի պաշտոնային դրույքաչափին համապատասխան:

4. Նաիրա Բաղդասարյանին աշխատանքի մեջ համարել 2026 թվականի օգոստոսի 24-ից:
5. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

ՄԱՐԶՊԵՏԻ ՏԵՂԱԿԱԼ,

Восстановимая подпись

ԱՐԱՄ ԳՐԻԳՈՐՅԱՆ

ՄԱՐԶՊԵՏԻՆ ՓՈԽԱՐԻՆՈՂ Подписано: GRIGORYAN ARAM 25097300132 **Ա. ԳՐԻԳՈՐՅԱՆ**